

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
26.04.2021թ. նիստի N 9 արձանագրություն

Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության հետ կապված հարցերի քննարկում :
2. Ուսանողների արտադրական պրակտիկայի ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր.

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 26-ը :

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին՝ նշելով, որ այս անգամ էլ ընտրել է նիստի անցկացման հեռավար տարբերակը՝ ելնելով գիտխորհրդի կազմի առողջությանն առնչվող առանվտանգությունից :

Գ.Բարսեղյանը ներկայացրեց մագիստրատուրայի և բակալավրիատի առկա և հեռակա բաժինների ավարտական աշխատանքների պաշտպանության նախատեսված օրերը : Դեկանը հավելեց նաև, որ բոլոր աշխատանքները պետք է ներբեռնվեն համալսարանի e-learning կայք պաշտպանությունից մի քանի օր առաջ :

Առկա ուսուցման մագիստրատուրա՝ ա.թ. մայիսի 3-6, բակալավրիատ՝ 10-27, բակ. հեռակա ուսուցման ա.թ. հունիսի 14, մանկավարժական կրթաբլոկի քննությունները կիրականացվեն առկա ուսուցման՝ ա.թ. հունիսի 1-7, հեռակա ուսուցման՝ հունիսի 18-ին :

Գ.Բարսեղյանը անդրադարձավ նաև ավարտական քննությունների կազմին, մասնավորապես՝ հրավիրված նախագահներին : Նա նշեց, որ ըստ օրենքի ամեն տարի ավարտական քննաշրջանի համար պետք է հրավիրել նոր նախագահ և ներկայացրեց նախագահներին ըստ ԵԼՀ ֆակուլտետի բաժինների :

Անգլ.լեզու և գրակ.- Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա.Հովհաննիսյան

Թագմ. գործ- Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա.Սիմոնյան

Միջմշ.հաղորդ./անգլերեն/ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա.Հովհաննիսյան

Ֆրանս./իսպ.,իտալ. լեզու և գրակ./ Բ.Գ.Թ., դոցենտ Վ.Հարությունյան

Գերմ.լեզու և գրակ. Բ.Գ.Թ., դոցենտ Լ.Սաֆարյան

2. Անդրադառնալով մասնագիտական պրակտիկայի հարցին Գ.Բարսեղյանը խոսքը փոխանցեց Ն.Մադոյանին, ով ներկայացրեց որոշ մանրամասներ այդ կապակցությամբ: Նա ասաց, որ մասնագիտական պրակտիկային մասնակցել է 319 ուսանող: Ն.Մադոյանը հավելեց, որ ամբիոնի վարիչները պետք է լրացնեն առաջադրված նկարագրիչների ձևաթուղթը, որպեսզի հետագայում ավելի քիչ բարդություններ ունենան պրակտիկայի գործընթացը կազմակերպելու առումով: Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ.Հարությունյանը առաջարկեց բոլոր ամբիոնի վարիչներին քննարկել այդ հարցը, վերանայել նկարագրիչները, քանի որ ամեն մի մասնագիտություն ունի իր յուրահատկությունը և միանունյն նկարագրիչը չի կարելի կիրառել բոլոր բաժինների վրա: Նա հավելեց նաև, որ պրակտիկան միջանկյալ օդակ է, որը տանում է դեպի մասնագիտական ձևավորում :Նրա կարծիքի հետ լիովին համաձայնեցին՝ Ս.Գասպարյանը, Գ.Գրիգորյանը, Ռ.Ղազարյանը՝

հաստատելով այն միտքը, որ միևնույն նկարագիրը չի կարող կիրառվել բոլոր բաժիններում, այն պետք չէ ընդհանրացնել :

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

- Գ.Բարսեղյանը ներկայացրեց կայանալիք EXPO-ի հետ կապված անելիքները : Նշվեց, որ բացման օրը ապրիլի 28 է , ապրիլի 29 տեղի է ունենալու զեկուցում՝ կազմակերպված անգլիական բանասիրության ամբիոնի կողմից, իսկ ապրիլի 30-ին կներկայացվի ԵԼՀ ֆակուլտետը իր ամբողջ ունենցած ու սկնկավոր պոտենցիալով :
- Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե.Երզնկյանը նշեց, որ ՈԻԳԸ-ի կազմը փոփոխության է ենթարկվել : Ներգրավված են երկրորդ և երրորդ կուրսի լավագույն ուսանողներ, որոնք ակտիվորեն զբաղվում են նախատեսված աշխատանքով :
- Որոշեցին Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., Ն.Մանուկյանին երաշխավորել դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն :
- Որոշեցին երաշխավորել ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Լիլիթ Կարապետյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Որոշեցին երաշխավորել Գ. Հարությունյանի «Պատկերավոր արտահայտչամիջոցների լեզվագործաբանական հայեցակերպը» մենագրությունը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

26.04.2021թ.